ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

31 հոկտեմբերի 2022 թվականի N 437 - Ա

«ՍՅՈՒՆԻՔՅԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՇՐՋԱԳԱՅՈՒԹՅՈՒՆ» ԽՈՐԱԳՐՈՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ «ԿԱՊԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԴՐԱՄԱՇՆՈՐՀ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ, ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ, ԱՇԽԱՏԱԿԱՐԳԸ, ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎՆ ՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 16-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2021 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2121-Ն որոշման N 5 հավելվածի 7-րդ աղյուսակի «Մշակութային միջոցառումների իրականացում» ծրագրով նախատեսված հատկացումներով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. «Սյունիքյան մշակութային շրջագայություն» խորագրով մշակութային միջոցառում կազմակերպելու նպատակով «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը հատկացնել 900.000 (ինը հարյուր հազար) ՀՀ դրամ, նրա հետ կնքելով դրամաշնորհի պայմանագիր:
2. Հաստատել՝
1) «Սյունիքյան մշակութային շրջագայություն» խորագրով մշակութային միջոցառման կազմակերպական կոմիտեի կազմը՝ համաձայն հավելված N 1-ի.
2) «Սյունիքյան մշակութային շրջագայություն» խորագրով մշակութային միջոցառման անցկացման ծրագիրը՝ համաձայն հավելված N2-ի.
3) «Սյունիքյան մշակութային շրջագայություն» խորագրով մշակութային միջոցառման աշխատակարգը՝ համաձայն հավելված N3-ի.
4) «Սյունիքյան մշակութային շրջագայություն» խորագրով մշակութային միջոցառման ծախսերի նախահաշիվը՝ համաձայն հավելված N4-ի.
5) «Սյունիքյան մշակութային շրջագայություն» խորագրով մշակութային միջոցառման ժամանակացույցը՝ համաձայն հավելված N 5-ի:

31.10.2022

X

ՂՈՒԿԱՍՅԱՆ ՌՈԲԵՐՏ

Подписано: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2022թ. հոկտեմբերի 31
ք. Կապան

Հավելված N 1
ՀՀ Սյունիքի մարզպետի
2022թ. հոկտեմբերի 31-ի
N 437-Ա որոշման

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
«Սյունիքյան մշակութային շրջագայություն» խորագրով մշակութային միջոցառման

1. Հ. Հարությունյան - ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ /նախագահ/

2. Ա. Ավագյան - ՀՀ Սյունիքի մարզպետի օգնական

3. Մ.Գանդալյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

4. Ն.Դավթյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ- տնտեսական զարգացման վարչության պետ

5. Ս. Ավետիսյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ

6. Թ.Կարապետյան - ՀՀ Սյունիքի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության մշակույթի և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ

7. Վ. Արզումանյան - «Կապանի մշակույթի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն

10/31/2022

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղար Է.Մարտիրոսյան

Հավելված N 2
Սյունիքի մարզպետի
2022թ. հոկտեմբեր 31-ի
N 437-Ա որոշման

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

«Սյունիքյան մշակութային շրջագայություն» խորագրով մշակութային միջոցառման

Միջոցառման նպատակն է.

1. Ապահովել համայնքների մշակույթի ոլորտի պատասխանատուների, տվյալ համայնքի երաժշտական, գեղարվեստի և արվեստի կրթօջախների ներկայացուցիչների, համայնքի շնորհալի ստեղծագործողների անմիջական հանդիպումն ու շփումը, ինչպես նաև փորձի փոխանակման, վարպետաց դասի վարման և քննարկումների միջոցով ակտիվացնել համայնքներում մշակութային կյանքը և բարձրացնել ուսուցման որակը:

2.Կազմակերպել գիտաճանաչողական այց մարզի համայնքներում գտնվող պատմամշակութային վայրեր և մշակութային կազմակերպություններ:

«Սյունիքյան մշակութային շրջագայություն» խորագրով մշակութային միջոցառման շրջանակներում այցելություններ՝

- Համայնքներում գործող երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ
- «Կապանի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ
- «Կապանի թանգարանների միավորում» ՀՈԱԿ
- Կապանի էլեկտրոնային գրադարան
- Վահանավանք վանական համալիր
- Մեղրի քաղաքի 17-րդ դարի Սուրբ Աստվածածին եկեղեցի և 17-րդ դարի Անապատան վանք
- Հ. Իգիթյանի անվան գեղագիտական կենտրոնի Մեղրու մասնաճյուղ
- Գորիսի Ա.Բակունցի տուն թանգարան
- «Գորիսի երկրագիտական թանգարան» ՀՈԱԿ
- Հ. Իգիթյանի անվան գեղագիտական կենտրոնի Գորիսի մասնաճյուղ
- «Քաջարանի մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ
- Սիսիանի Զորաց Քարեր
- Սիսիանի Ադոնցի անվան պատմության թանգարան
- «ՀՀ Ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ Սիսիանի մասնաճյուղ
- Տաթև վանական համալիր

3.Ծաղկադրման արարողակարգեր Արցախյան գոյամարտում զոհված ազատամարտիկների, անհետ կորածների հուշարձանին, ապրիլյան քառօրյա պատերազմում զոհվածների և Արցախյան 44-օրյա պատերազմում զոհվածների շիրիմներին:

10/31/2022

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано: MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղար Է.Մարտիրոսյան

Հավելված N 3
ՀՀ Սյունիքի մարզպետի
2022թ. հոկտեմբերի 31-ի
N 437-Ա որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ

«Սյունիքյան մշակութային շրջագայություն» խորագրով մշակութային միջոցառման

Միջոցառման նպատակն է

Ապահովել համայնքներում բնակվող շնորհալի և ստեղծագործող անձանց անմիջական հանդիպումն ու շփումը, իսկ փորձի փոխանակման, վարպետաց դասի վարման և քննարկումների միջոցով ակտիվացնել համայնքներում մշակութային կյանքը, բարձրացնել ուսուցման որակը:

Միջոցառման պատվիրատուն և կատարողը

«Սյունիքյան մշակութային շրջագայություն» խորագրով մշակութային միջոցառման պատվիրատուն է ՀՀ Սյունիքի մարզպետարանը, կատարողը՝ ՀՀ Սյունիքի մարզային ենթակայության «Կապանի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը:

Միջոցառման մասնակիցները

«Սյունիքյան մշակութային շրջագայություն» խորագրով մշակութային միջոցառումներին կմասնակցեն մարզի համայնքների արվեստի, գեղարվեստի և երաժշտական դպրոցների սաներ, մշակույթի ոլորտի պատասխանատուներ, տվյալ համայնքի երաժշտական, գեղարվեստի և արվեստի կրթօջախների ներկայացուցիչներ, ստեղծագործող երիտասարդներ և պատանիներ:

Միջոցառման ժամկետը և վայրը

Միջոցառումները անց կկացվեն ս/թ նոյեմբեր ամսին, մարզի համայնքներում:

Միջոցառման ընթացքը և ծախսերը

«Սյունիքյան մշակութային շրջագայություն» խորագրով մշակութային միջոցառումները կկազմակերպվեն ըստ անցկացման ծրագրի, որտեղ արտացոլված են ծրագրի ժամանակացույցը, միջոցառումների անցկացման վայրը և ժամանակը:

Միջոցառման ընթացքում տեղի ունեցող փոփոխությունները կհամաձայնեցվեն կազմկոմիտեի հետ: Միջոցառումների անցկացման հետ կապված կազմակերպչական ծախսերը՝ /համայնքների փոխայցելությունների և մշակութային միջոցառումների մասնակիցների տեղափոխման տրանսպորտային, հանրային սնունդ, արագ սնունդ և այլ ծառայություններ/ կհոգա պատվիրատուի կողմից հանդես եկող կազմակերպությունը:

10/31/2022

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղար Է.Մարտիրոսյան

Հավելված N 4
ՀՀ Սյունիքի մարզպետի
2022թ. հոկտեմբերի 31-ի
N 437-Ա որոշման

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԵՔ

«Սյունիքյան մշակութային շրջագայություն» խորագրով մշակութային միջոցառման

h/h	Ծախսերի անվանումը	Հոդված	Գումարը /հազար դրամ/
1	Տրանսպորտային միջոցների վարձակալություն	4216	345,0
2	Հանրային սննդի ծառայություններ	4236	504,0
3	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	21.0
4	Գրասենյակային պիտույքներ և նյութեր	4261	30.0
	Ընդամենը		900.0

10/31/2022

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано: MARTIROSYAN EDGAR 4003840615

ՀՀ Սյունիքի մարզպետարանի
գլխավոր քարտուղար Է.Մարտիրոսյան

Հավելված N 5
Սյունիքի մարզպետի
2022թ. նոյեմբերի 31-ի
N [illegible]-Ա որոշման

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

«Սյունիքյան մշակութային շրջագայություն» խորագրով մշակութային միջոցառման

h/h	Միջոցառման անվանումը	Ժամկետը	Վայրը
1	Մեղրի համայնքի պատվիրակությունը Կապան համայնքում: Այցելություն Կապանի երկրագիտական թանգարան ՊՈԱԿ, Կապանի թանգարանների միավորում ՀՈԱԿ, Վահանավանք վանական համալիր, Կապանի գեղարվեստի, արվեստի և երաժշտական դպրոցներ: Այցելություն Բաղաբուրջի հուշահամալիր՝ ծաղկադրում Արցախյան գոյամարտում զոհված ազատամարտիկների, անհետ կորածների հուշարձանին, ապրիլյան քառօրյա պատերազմում զոհվածների և Արցախյան 44-օրյա պատերազմում զոհվածների շիրիմներին:	նոյեմբեր	Կապան համայնք
2	Սիսիան և Տաթև համայնքների պատվիրակությունը Մեղրի համայնքում: Այցելություն Մեղրի քաղաքի 17-րդ դարի Սուրբ Աստվածածին եկեղեցի, 17-րդ դարի Անապաստան վանք, Մեղրի քաղաքի բնակիչ, արվեստագետ Պապ Օհանյանի տուն-արվեստանոց, Հ. Իգիթյանի անվան գեղագիտական կենտրոնի Մեղրիի մասնաճյուղ, «Մեղրի համայնքի «Արևիք» արվեստի դպրոց» ՀՈԱԿ:	նոյեմբեր	Մեղրի համայնք
3	Կապան համայնքի պատվիրակությունը Գորիս համայնքում: Այցելություն Գորիսի Ա.Բակունցի տուն թանգարան, «Գորիսի երկրագիտական թանգարան» ՀՈԱԿ, Հ. Իգիթյանի անվան գեղագիտական կենտրոնի Գորիսի մասնաճյուղ, «Գորիսի Ա.Սաթյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ:	նոյեմբեր	Գորիս համայնք
4	Գորիս և Տեղ համայնքների պատվիրակությունը Քաջարան համայնքում: «Քաջարանի մանկական արվեստի դպրոց» ՀՈԱԿ, «Կապանի երկրագիտական թանգարան» ՊՈԱԿ և «Կապանի թանգարանների միավորում» ՀՈԱԿ:	նոյեմբեր դեկտեմբեր	ք.Քաջարան ք.Կապան
5	Քաջարան համայնքի պատվիրակությունը Սիսիան համայնքում: Ծաղկադրում Արցախյան գոյամարտում զոհված ազատամարտիկների, ապրիլյան քառօրյա պատերազմում զոհվածների շիրիմներին: Այցելություն Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի, Սիսիանի Զորաց Քարեր, Սիսիանի Ադոնցի անվան պատմության թանգարան, «ՀՀ Ազգային պատկերասրահ» ՊՈԱԿ-ի Սիսիանի մասնաճյուղ, «Սիսիանի Զ.Խաչատրյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ, Տաթև վանական համալիր:	նոյեմբեր	Սիսիան համայնք

10/31/2022

X

ԷԴԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Подписано: MARTIROSYAN EDGAR 4003840615

գլխավոր քարտուղար Է.Մարտիրոսյան